ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 04/2021
N ԲԸԱՀ ԾԶԲ-03/2017 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան <<27>>08 2021թ.

ՀՀ ոստիկանությունը, ի դեմս ոստիկանության պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ Կ. Ցուցուլյանի, որը գործում է ոստիկանության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Սեքյուրիթի Դրիմ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա. Պողոսյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, հիմք ընդունելով 15.02.2017թ-ին կնքված <<Գույքի հավատարմագրային կառավարման>> N ԲԸԱՀԾԶԲ-03/2017 գնման Պայմանագիրը /այսուհետև՝ Պայմանագիր/, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը /այսուհետև՝ Համաձայնագիր/ հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան, գինը, վճարման կարգը և գործողության ժամկետը

1.1 Սույն Համաձայնագրով Կողմերը համաձայնության եկան 15.02.2017թ. կնքված թիվ ԲԸԱՀ ԾԶԲ-03/2017 ծածկագրով պայմանագրի ընդհանուր գումարը թողնել անփոփոխ՝ 3 272 200 000 (երեք միլիարդ երկու հարյուր յոթանասուներկու միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ մատուցված ծառայությունների դիմաց վճարումը կատարել սույն Համաձայնագրի անբաժանելի մասը կազմող Հավելված 1-ին համապատասխան:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից, գործում է մինչև Կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքներն ու պարտականությունները, ծառայությունների մատուցման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.4 Սույն Համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու բնօրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

2.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ոստիկանությունը:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ոստիկանություն	«Սեքյուրիթի Դրիմ» ՍՊԸ
ք. Երևան, Նալբանդյան 130	ք. Երևան, Տիգրանյան 27
ՀՀ Ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն	«Ինեկոբանկ» ՓԲԸ Արաբկիրի մ/ճ
Հ/Հ 900011024321	Հ/Հ 2050622017491003
ՀՎՀՀ 01840082	ՀՎՀՀ 00087963
հեռ. 010-59-60-21	Էլ. հասցեն՝ armen.khanamiryan@secdr.am
	հեռ. (010) 230017
Կ. Ցուցուլյան	Ա. Պողոսյան
/ՀՀ ոստիկանության պետի տեղակալ/	տնօրեն
(ստորագրություն) Կ.Տ	(ստորագրություն) Կ.Տ

Հավելված N 1
<< 27 >> 08 2021թ.
Համաձայնագիր N 04/2021
N ԲՀԱՀ ԾՁԲ-03/2017 գնման պայմանագրի

Վճարման ժամանակացույց

Հ/Հ	Ապրանքի անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2021թ. ճՈ արտաբյուջեից 03.01.01.08												
		Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Ընդամենը տարի
1	Հավատարմագրային կառավարման ծառայություններ 66161100/1								491558800	491558800	792200000	792200000	792200000	792200000
2	Հավատարմագրային կառավարման ծառայություններ 66161100/2								1798981200	1798981200	2480000000	2480000000	2480000000	2480000000
Ընդամենը														3272200000

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ու
ՀՀ ոստիկանություն
ք. Երևան, Նալբանդյան 130
ՀՀ Ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011024321
ՀՎՀՀ 01840082
հեռ. 010-59-60-21

Կ. Յուզբաշյան
ՀՀ ոստիկանության
պետի տեղակալ
(ստորագրություն)

Կ.Տ

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ
«Սեքյուրիթի Դրիմ» ՍՊԸ
ք. Երևան, Տիգրանյան 27
«Ինեկոբանկ» ՓԲԸ Արաբկիրի մ/ճ
Հ/Հ 20506220174911003
ՀՎՀՀ 00087963
էլ. հասցեն՝ armen.khanamiryan@secdr.am
հեռ. (010) 230017

Ա. Պողոսյան
տնօրեն
(ստորագրություն)

Կ.Տ